



ՎԵՐԻՏԱՍ-ի հիմնական նպատակն է ՀՀ-ում բարելավել բարձրագույն կրթության երրորդ աստիճանը՝ այն համադրելով Եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին:

ՎԵՐԻՏԱՍ-ի թիրախում են հետևյալ խնդիրները՝

- Ձարգացնել հետազոտություն իրականացնելու մարդկային կարողությունները՝ ձևավորելով հետազոտողների մի ստվար զանգված, ովքեր կիրականացնեն ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավում, ինտեգրում միջազգային պահանջներին և արդյունավետ կառավարում:
- Ապահովել ՀՀ Որակավորումների ազգային շրջանակում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի միջազգային ճանաչումը՝ մշակելով աստիճանաշնորհման չափանիշեր, որոնք համադրելի են Զալցբուրգյան սկզբունքների հետ և մրցունակ են միջազգային մակարդակում:
- Մշակել գիտական հետազոտությունների որակի ապահովման և մոնիթորինգի համակարգ:
- Խթանել և զարգացնել ՀՀ բուհերում գիտության և հետազոտության ինտեգրումը միջազգային պահանջներին՝ ստեղծելով համապատասխան կառույցներ, որոնք կնպաստեն հետազոտության իրականացմանը, կապ կստեղծեն կրթության, հետազոտության և նորարարությունների միջև, կբարելավեն հետազոտական կրթության որակը, արդյունավետությունը և ճկունությունը:



Co-funded by the
Tempus Programme
of the European Union

This project has been funded with support from the European Commission.

This publication reflects the views only of the author, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.

Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ:

Սույն հրապարակումը արտացոլում է միայն հեղինակների տեսակետերը, և Հանձնաժողովը չի կրում որևէ պատասխանատվություն դրանում պարունակվող տեղեկատվության համար:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ



Համակարգող՝

ՀՀ, ք. Երևան 0025, Կոբյունի 2 փ.
Էլ. հասցե՝ veritas.mngt@gmail.com

www.tempusveritas.am

VERITAS

STRUCTURAL DEVELOPMENT OF THE THIRD CYCLE BASED ON SALZBURG PRINCIPLES

543710-TEMPUS-1-2013-1-AM-TEMPUS-SMGR



ՎԵՐԻՏԱՍ-ը Կառավարման բարեփոխումների առաջնահերթության ներքո ազգային ծրագիր է, Կրթության, տեսաձայնային և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) № 35/2012, 6-րդ փուլ և Կառուցվածքային միջոցառումներ:




Ծրագրի արդյունքները, որոնք վկայում են դրա հաջողության մասին.

- Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ուղղությամբ հաստատությունների կարողությունների զարգացում, Հետազոտական կենտրոնների ստեղծում:
- Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի և հետազոտության որակի նախապայմանների ստեղծում
- Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի համար աստիճան շնորհելու և որակի ապահովման չափանիշերի ձևավորում:
- Հայաստանի 11 հետազոտողի կրթական ծրագրի վերանայում և իրականացում:
- Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի համար աստիճան շնորհելու և որակի ապահովման չափանիշերի հաստատում:



Կառուցվածքը

Ծրագրի կառավարումը իրականացնում են հետևյալ մարմինները՝



Հրատարակումներ



Միջոցառումներ



Նախագիծը բավականին հավակնոտ է և ի սկզբանե մի շարք մարտահրավերների առջև է կանգնել: Առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ժամանակ և ոլորտի շահագրգիռ մարմինների փոխադարձ համագործակցություն: Այս նպատակով էլ ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ վերապատրաստումներ, աշխատաժողովներ, ինչպես նաև տեղական հանդիպումներ ու քննարկումներ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավման, Զալցբուրգյան սկզբունքների հետ համադրելիության, որակի ապահովման, ինչպես նաև հետազոտողի կրթական ծրագրերի վերանայման ուղղություններով: Կոնսորցիումը վստահ է, որ համատեղ գործելու և աջակցության դեպքում հասնելու է ցանկալի արդյունքի և ծրագրի արդյունավետ իրականացմանը:



VERITAS

STUDY VISIT
14-29 NOVEMBER 2015



Երկշաբաթյա այցը եվրոպական գործընկեր համալսարաններ մեծ հնարավորություն տվեց ՎԵՐԻՏԱՍ-ի խմբին գաղափարներ փոխանակելու և Եվրոպայում բարձրագույն կրթության երրորդ աստիճանին ծանոթանալու համար: